

10
ՀՈՒԼԻՍ
2026

Luys  Lnyu®



ԱԴԻԲԵՋԱՆ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՃՆՇՄԱՆ ՏԱԿ. ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԱԴՐԲԵՋԱՆ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Զեկույցի անգլերեն պաշտոնական բնօրինակի հղումը՝

<https://www.icj.org/azerbaijan-independence-of-lawyers-and-fair-trial-rights-compromised-new-icj-report/>



ԱՌԱՋԱԲԱՆ

Արցախի նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ռազմական գործողություններից հետո արցախահայության ճակատագիրը շարունակում է մնալ ժամանակակից միջազգային իրավունքի ամենալուրջ փորձություններից մեկը: Միջազգային հանրության ուշադրությունն առաջին հերթին կենտրոնացել է ռազմական գործողությունների, բնակչության բռնի տեղահանության և դրանց հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամի վրա: Սակայն այդ ողբերգության ոչ պակաս կարևոր և թերևս առավել երկարաժամկետ հետևանքներից մեկը վերաբերում է այն անձանց իրավունքներին, որոնք հայտնվել են Ադրբեջանի քրեական արդարադատության համակարգում:

Վերջին տարիներին Ադրբեջանը լայնածավալ քրեական հետապնդումներ է իրականացրել հայ ռազմագերիների, քաղաքացիական անձանց, ինչպես նաև Արցախի Հանրապետության նախկին քաղաքական և ռազմական ղեկավարության նկատմամբ՝ դրանք ներկայացնելով որպես օրենքով սահմանված քրեական դատավարություններ: Սակայն արդյոք այդ գործընթացները համապատասխանում են միջազգային իրավունքի պահանջներին: Կարո՞ղ են դրանք դիտարկվել որպես անկախ և անաչառ դատարանի կողմից իրականացվող արդար դատաքննություններ, թե՞ արտացոլում են այնպիսի դատական

համակարգի գործունեությունը, որի անկախությունն ու անաչառությունը վաղուց արդեն լրջորեն կասկածի տակ են դրվել միջազգային մասնագիտական կառույցների կողմից:

Այս հարցերի առավել ամբողջական և հիմնավորված պատասխաններից մեկը տրված է Իրավաբանների միջազգային հանձնաժողովի (International Commission of Jurists – ICJ) կողմից 2026 թվականի մայիսին հրապարակված **«Azerbaijan: Justice Under Pressure — Independence of Lawyers and the Right to a Fair Trial»** զեկույցում:

ICJ-ն իրավունքի գերակայության, դատական անկախության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աշխարհի ամենահեղինակավոր մասնագիտական կազմակերպություններից մեկն է: Այն միավորում է շուրջ վաթսուն ճանաչված դատավորների և իրավաբանների աշխարհի տարբեր մայրցամաքներից, որոնցից շատերը ծառայել են միջազգային դատարաններում և տրիբունալներում կամ զբաղեցրել են բարձր դատական պաշտոններ իրենց պետություններում: Հանձնաժողովը ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) խորհրդատվական կարգավիճակ ունեցող կազմակերպություն է և տասնամյակներ շարունակ համագործակցում է ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների և ազգային դատական համակարգերի հետ՝ նպաստելով իրավունքի գերակայության և անկախ արդարադատության ամրապնդմանը: Այդ հանգամանքներն ICJ-ի իրավական գնահատականներին հաղորդում են առանձնահատուկ մասնագիտական հեղինակություն և դրանք էապես տարբերում են շարքային հասարակական կազմակերպությունների հրապարակումներից:

Հատկանշական է նաև, որ այս զեկույցն արձագանք չի հանդիսանում միայն Արցախի վերջին իրադարձություններին: ICJ-ն Ադրբեջանի դատական համակարգը համակարգված ուսումնասիրում է առնվազն 2016 թվականից՝ հրապարակելով մի շարք հիմնարար զեկույցներ, որոնցում դեռևս տարիներ առաջ արձանագրվել էին փաստաբանների նկատմամբ ճնշումները, փաստաբանական

համայնքի նկատմամբ քաղաքական վերահսկողությունը, անկախ փաստաբանների արտոնագրերի կամայական դադարեցումը, ինչպես նաև դատական իշխանության համակարգային կախվածությունը գործադիր իշխանությունից: Տասը տարի անց հրապարակված նոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ խնդիրները ոչ միայն չեն հաղթահարվել, այլև զգալիորեն խորացել են:

Ձեկույցի հիմնական եզրակացությունն այն է, որ Ադրբեջանի փաստաբանական և դատական համակարգերը շարունակում են գործել գործադիր իշխանության վճռորոշ ազդեցության պայմաններում: Փաստաբանական համայնք ընդունվելու իրավունքն իրականացվում է ոչ թափանցիկ մեխանիզմներով: Անկախ փաստաբանները ենթարկվում են կարգապահական և քրեական հետապնդումների, քաղաքական զգայուն գործերով պաշտպանություն իրականացնող իրավաբանները մշտապես գործում են արտոնագրից զրկվելու վտանգի պայմաններում, իսկ դատարանները գործնականում չեն իրականացնում անկախ դատական իշխանության սահմանադրական առաքելությունը:

Ձեկույցում հիշատակվում է նաև, որ Ադրբեջանի դատարաններում մեղադրական դատավճիռների տոկոսը գերազանցում է 99 տոկոսը: Համեմատության համար հարկ է նշել, որ կայացած ժողովրդավարական պետությունների քրեական արդարադատության համակարգերում արդարացման դատավճիռների բաժինը սովորաբար զգալիորեն ավելի բարձր է: Դատապարտումների գրեթե համընդհանուր ցուցանիշը բնորոշ է այնպիսի համակարգերի, որոնցում քրեական գործի ելքը գործնականում կանխորոշված է լինում մինչև դատաքննության մեկնարկը: Հենց այսպիսի եզրակացության է հանգում նաև ICJ-ն՝ գնահատելով Ադրբեջանի դատական համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները:

Սակայն հայ ընթերցողի համար զեկույցի ամենակարևոր առանձնահատկությունը մեկ այլ հանգամանք է: Արցախի նախկին ղեկավարների և մյուս հայ կալանավորվածների դատավարությունները ICJ-ն չի ներկայացնում որպես

պատերազմի պայմաններում տեղի ունեցած մեկուսացված կամ բացառիկ խախտումներ: Ընդհակառակը, դրանք դիտարկվում են որպես այն նույն համակարգային խնդիրների առավել ծայրահեղ դրսևորումը, որոնք տարիներ շարունակ կիրառվել են Ադրբեջանի քաղաքացիների՝ ընդդիմադիր քաղաքական գործիչների, լրագրողների, իրավապաշտպանների և անկախ փաստաբանների նկատմամբ:

Այս համակարգային բնույթը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով: Ադրբեջանցի իրավապաշտպան, փաստաբան Ինթիգամ Ալիևի, փաստաբան Խալիդ Բագիրովի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ Ռասուլ Ջաֆարովի գործերով Եվրոպական դատարանն արձանագրել է արդար դատաքննության, ազատության, արտահայտվելու ազատության և այլ հիմնարար իրավունքների խախտումներ: Չնայած այդ վճիռներին՝ Ադրբեջանի իշխանությունները մինչև օրս ամբողջությամբ չեն վերացրել արձանագրված համակարգային խնդիրները, իսկ որոշ դեպքերում չեն վերականգնել նույնիսկ խախտումներից անմիջականորեն տուժած անձանց իրավունքները: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ նույն մեխանիզմները, որոնք այսօր կիրառվում են հայ կալանավորվածների նկատմամբ, տարիներ շարունակ փաստագրվել և միջազգային մակարդակով դատապարտվել են Ադրբեջանի քաղաքացիների գործերով:

Հենց այս հանգամանքն է զեկույցի եզրակացություններին հաղորդում առանձնահատուկ միջազգային վստահելիություն: Հայ գերիների իրավունքների խախտումները ներկայացվում են ոչ թե որպես քաղաքական հայտարարությունների կամ երկկողմ հակամարտության համատեքստում հնչող գնահատականների արդյունք, այլ որպես վաղուց փաստագրված և շարունակաբար ուսումնասիրության առարկա դարձած համակարգային երկույթի բնական հետևանք:

ICJ-ի զեկույցը կառուցված է հետևողական տրամաբանությամբ. մինչև հայ գերինների գործերի անմիջական իրավական վերլուծությանն անցնելն այն հաստատում է ավելի լայն համատեքստ, որի շրջանակում այդ գործերը դառնում են ոչ թե բացառություն, այլ օրինաչափ հետևանք:

Թեև սույն հրապարակման հիմնական առարկան ICJ-ի զեկույցի չորրորդ գլուխն է՝ «Դատարանները և արդար դատաքննության իրավունքը», զեկույցի իրավական տրամաբանությունն ամբողջությամբ հասկանալու համար անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ ուսումնասիրության առաջին երեք գլուխներին: Դրանք ոչ միայն նկարագրում են Ադրբեջանի փաստաբանական և քրեական արդարադատության համակարգի առանձին խնդիրները, այլև քայլ առ քայլ ձևավորում են այն կառուցվածքային համատեքստը, որի շրջանակում ICJ-ն հետագայում գնահատում է հայ կալանավորվածների դատավարությունները:

Ձեկույցի *առաջին գլուխը* նվիրված է փաստաբանական մասնագիտության անկախությանը և ձևավորում է ամբողջ ուսումնասիրության հիմնարար եզրակացությունը. Ադրբեջանում անկախ պաշտպան ունենալու իրավունքը խաթարված է ոչ թե առանձին դեպքերում, այլ ինստիտուցիոնալ մակարդակում:

ICJ-ն ցույց է տալիս, որ փաստաբանական գործունեությամբ զբաղվելու իրավունքը և գործունեությունը վերահսկող մեխանիզմները գործնականում փաստաբաններին զրկել են անհրաժեշտ անկախությունից: Փաստաբանների ընդունելության և կարգապահական պատասխանատվության ընթացակարգերը, որոնք իրավական պետությունում պետք է ծառայեն մասնագիտական չափանիշների պահպանմանը, հաճախ օգտագործվում են որպես քաղաքական ազդեցության գործիքներ: Մարդու իրավունքների ոլորտում գործունեություն ծավալած կամ քաղաքական զգայուն գործերով հանդես եկած փաստաբանները, ըստ զեկույցի, ենթարկվել են արտոնագրերից զրկման, կարգապահական վարույթների, վարչական և քրեական ճնշումների, իսկ այդ միջամտությունների մի մասը հետագայում արձանագրվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

ICJ-ի գնահատմամբ՝ այս քաղաքականության համակարգային հետևանքն այն է, որ Ադրբեջանում քաղաքական կամ հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող գործերով արդյունավետ պաշտպանություն ստանձնելու պատրաստ անկախ փաստաբանների շրջանակը դարձել է ծայրահեղ սահմանափակ: Այսպիսով, դեռևս մինչև Արցախի ղեկավարների և մյուս հայ կալանավորվածների նկատմամբ քրեական հետապնդումների սկսվելը պաշտպանական համակարգի անկախությունն արդեն էականորեն թուլացած էր:

Երկրորդ գլուխը շարունակում է այս վերլուծությունը՝ անդրադառնալով իրավաբանական օգնության իրական հասանելիությանը: Զեկույցը փաստում է, որ խնդիրը չի սահմանափակվում փաստաբանների թվով կամ տարածքային անհավասար բաշխմամբ: Առավել էականն այն է, որ նախաքննական փուլում պաշտպանի մասնակցությունը հաճախ կախված է լինում քննչական մարմինների կամ դատախազության կամքից, իսկ փաստաբան-վստահորդ գաղտնի հաղորդակցությունը չի երաշխավորվում գործնականում: ICJ-ն նաև արձանագրում է, որ պետության կողմից նշանակված պաշտպանները որոշ դեպքերում չեն իրականացնում արդյունավետ պաշտպանություն՝ փոխարենը նպաստելով վարույթի ձևական օրինականության ապահովմանը:

Արցախի նախկին ղեկավարների գործերը, ըստ զեկույցի, դարձել են այս համակարգային խնդիրների առավել տեսանելի դրսևորումը: Մասնավորապես, Ռուբեն Վարդանյանի միջազգային փաստաբանին արգելվել է մուտք գործել Ադրբեջան, իսկ պաշտպանության արդյունավետ կազմակերպման հնարավորություններն ամբողջ վարույթի ընթացքում շարունակաբար սահմանափակվել են:

Եթե ICJ-ի զեկույցի առաջին երկու գլուխները վերաբերում են պաշտպանության ինստիտուցիոնալ հիմքերին, ապա *երրորդ գլուխը* ցույց է տալիս, թե ինչպես են այդ թերությունները դրսևորվում նախաքննական վարույթի ընթացքում:

ICJ-ն, հենվելով սեփական ուսումնասիրության, ինչպես նաև Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT), ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի և այլ միջազգային մարմինների նյութերի վրա, եզրակացնում է, որ նախնական կալանքի կիրառման, կալանքի պայմանների, գործի նյութերին հասանելիության և ինքնամեղադրանքից պաշտպանության ոլորտներում առկա խնդիրները կրում են համակարգային բնույթ:

Ձեկույցում ներկայացված տվյալները վկայում են, որ նախաքննական փուլում ֆիզիկական և հոգեբանական ճնշման, ինքնամեղադրող ցուցմունքներ կորզելու, ինչպես նաև փաստաբանի լիարժեք մասնակցությունը սահմանափակելու դեպքերը չեն հանդիսանում մեկուսացված բացառություններ: Նույն կերպ, պաշտպանության կողմի համար գործի նյութերին արդյունավետ ծանոթանալու հնարավորությունը հաճախ սահմանափակվում է այնպիսի ծավալով, որ գործնականում անհնար է դառնում պատշաճ պաշտպանություն նախապատրաստելը:

Ռուբեն Վարդանյանի գործը, ըստ ICJ-ի, արտահայտում է այս խնդիրների ամբողջությունը: Պաշտպանությանը տրամադրված՝ 422 հատորից բաղկացած քրեական գործի նյութերը հասանելի են դարձել չափազանց ուշ, փաստաթղթերը ներկայացվել են միայն ադրբեջաներեն, մեղադրական եզրակացության թարգմանությունն ունեցել է էական թերություններ, իսկ տեսաձայնային ապացույցների զգալի մասը պաշտպանության համար մնացել է անհասանելի: Միաժամանակ ներկայացվել են լուրջ պնդումներ կալանքի պայմանների, խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի և փաստաթղթերի հավաստիության վերաբերյալ:

ICJ-ի զեկույցի առաջին երեք գլուխները ներկայացնում են ուսումնասիրության կառուցվածքային հիմքը: Դրանք ցույց են տալիս, որ մինչև դատաքննությունը սկսվելը պաշտպանության անկախությունը, փաստաբանի արդյունավետ մասնակցությունը և նախաքննական հիմնական երաշխիքներն արդեն իսկ

զգալիորեն սահմանափակված էին: Այս համատեքստում չորրորդ գլուխը բնականորեն անցնում է հիմնական հարցին՝ արդյոք կարելի է արդար դատաքննություն համարել այնպիսի դատական վարույթը, որի առանցքային երաշխիքների զգալի մասը խաթարվել է դեռևս դատաքննությունից առաջ: Հենց այդ հարցին է նվիրված զեկույցի հաջորդ և կարևորագույն *չորրորդ գլուխը՝ «Դատարանները և արդար դատաքննության իրավունքը»:*

Չեկույցի այս մասը չի սահմանափակվում առանձին դատավարությունների նկարագրությամբ, այլ նախ ներկայացնում է այն միջազգային իրավական չափանիշները, որոնց համապատասխան պետք է գնահատվի յուրաքանչյուր քրեական դատավարություն՝ անկախ պետությունից, հակամարտությունից կամ մեղադրանքի բնույթից: Միայն այդ համընդհանուր չափանիշների հիման վրա ICJ-ն անցնում է Արցախի նախկին ղեկավարների և մյուս հայ կալանավորվածների գործերի մանրամասն իրավական գնահատականին:

ICJ-ն իր վերլուծությունը սկսում է ոչ թե կոնկրետ դատավարությունների նկարագրությամբ, այլ միջազգային իրավունքի այն հիմնարար սկզբունքների ներկայացմամբ, որոնք պարտադիր են յուրաքանչյուր պետության համար՝ անկախ քաղաքական հանգամանքներից կամ քրեական հետապնդման առարկայից:

Այդ սկզբունքները պատահականորեն չեն ձևավորվել: Դրանք ամրագրվել են հատկապես XX դարի քաղաքական ցուցադրական դատավարությունների, զանգվածային բռնաճնշումների և քաղաքական հաշվեհարդարների ողբերգական փորձից հետո՝ որպես այն նվազագույն երաշխիքներ, որոնք իրավական դատավարությունը տարբերում են քաղաքական հետապնդումից: Ժամանակակից միջազգային իրավունքում արդար դատաքննության իրավունքը ոչ միայն մեղադրյալի անհատական իրավունք է, այլև ամբողջ դատական համակարգի լեգիտիմության հիմնական չափանիշը:

Ըստ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի, որ իր գործը քննվի օրենքով ստեղծված, իրավասու, անկախ և անաչառ դատարանի կողմից: Յուրաքանչյուր մեղադրյալ համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով: Նա պետք է ունենա բավարար ժամանակ և իրական հնարավորություն պաշտպանությունը նախապատրաստելու, ազատորեն ընտրելու իր պաշտպանին, ծանոթանալու գործի բոլոր նյութերին, վիճարկելու մեղադրանքի ապացույցները, ներկայացնելու սեփական ապացույցները, հարցաքննելու վկաներին, օգտվելու որակյալ թարգմանչի ծառայություններից և հաղորդակցվելու պաշտպանի հետ՝ լիակատար գաղտնիության պայմաններում: Դատավարությունը պետք է լինի հրապարակային, իսկ դատարանի յուրաքանչյուր որոշում՝ հիմնավորված և պատճառաբանված:

Այս սկզբունքները ձևական կամ ընթացակարգային կանոններ չեն: Դրանք այն նվազագույն երաշխիքներն են, որոնց բացակայության դեպքում դատավարությունը կորցնում է իր իրավական բնույթը և վերածվում է պետական իշխանության կողմից նախապես կանխորոշված գործընթացի:

ICJ-ի գնահատմամբ՝ Արցախի նախկին ղեկավարների և մյուս հայ կալանավորվածների գործերում այս հիմնարար երաշխիքների զգալի մասը համակարգված կերպով խախտվել է:

Առանձնապես խոսուն է թարգմանության իրավունքի խախտման փաստը, որը զեկույցում ներկայացվում է որպես արդար դատաքննության ամենակոպիտ օրինակներից մեկը: Վազիֆ Խաչատրյանի դատավարության ընթացքում նրա հայերեն արտահայտությունը՝ «Ես այնտեղ չեմ եղել, բոլորից ներողություն եմ խնդրում, ես այնտեղ չեմ եղել», դատական թարգմանչի կողմից ներկայացվել է որպես հայ ժողովրդի կողմից կատարված գործողությունների համար ադրբեջանական ժողովրդից ներողություն խնդրելու հայտարարություն: Այս խեղաթյուրումն ամբողջությամբ փոխել է ցուցմունքի իմաստը. մասնակցությունը

հերքող հայտարարությունը վերածվել է մեղայականի: Հետագայում Խաչատրյանը դատապարտվել է տասնհինգ տարվա ազատազրկման: Թեև նա 2026 թվականի հունվարին ազատ է արձակվել մյուս երեք հայ կալանավորվածների հետ, սակայն այդ դատավճիռը հիմնված էր նաև այնպիսի դատավարության վրա, որի ընթացքում արձանագրվել էր նման էական խեղաթյուրում:

ICJ-ն առանձնահատուկ ուշադրություն է հրավիրում նաև դատարանի իրավասության խնդրին: Տասնհինգ հայ մեղադրյալների գործերը քննվել են Բաքվի ռազմական դատարանում, մինչդեռ նրանցից առնվազն ութը եղել են քաղաքացիական պաշտոնատար անձինք: Միջազգային չափանիշներով քաղաքացիական անձանց նկատմամբ ռազմական դատարանների իրավազորությունը թույլատրելի է միայն բացառիկ և խիստ սահմանափակ դեպքերում: Ավելին, նույնիսկ Ադրբեջանի քրեական դատավարության օրենսգիրքը ռազմական դատարանների իրավասությունը կապում է հիմնականում զինվորական ծառայության կամ զինծառայողների կողմից կատարված հանցագործությունների հետ: Հետևաբար, ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ Ադրբեջանի ներպետական օրենսդրության տեսանկյունից, նման իրավազորության կիրառումը լուրջ իրավական հարցեր է առաջացնում:

Ձեկույցը փաստում է նաև ընտրված պաշտպանի իրավունքից օգտվելու սահմանափակումը: Ռուբեն Վարդանյանի միջազգային փաստաբանին կամայականորեն արգելվել է մուտք գործել Ադրբեջան, ինչի հետևանքով նա զրկվել է իր ընտրած պաշտպանի ծառայություններից օգտվելու իրավունքից: Ավելի ուշ Վարդանյանը հայտարարել է, որ դատավարությունն արդեն վերածվել է իրավական իմաստից զուրկ ձևական գործընթացի և հրաժարվել է մասնակցել դրան, այն բնութագրելով որպես «դատական ֆարս»:

Պաշտպանության արդյունավետ իրականացման հնարավորությունը նույնպես, ըստ ICJ-ի, փաստացի բացառվել է: Վարդանյանի պաշտպանական թիմը ներկայացրել է ավելի քան վաթսույն դատավարական միջնորդություն: Դրանցից ոչ

մեկը չի բավարարվել, իսկ մեծ մասը դատարանը նույնիսկ չի քննարկել: Պաշտպանությանը չեն տրամադրվել տեսաձայնագրությունները, մերժվել են պաշտպանության վկաներին հարցաքննելու միջնորդությունները, իսկ բազմաթիվ միջնորդություններ ընդհանրապես չեն արտացոլվել դատական պաշտոնական արձանագրություններում: Այս պայմաններում փաստաբանի մասնակցությունը, ICJ-ի գնահատմամբ, կորցնում է բովանդակային նշանակությունը և վերածվում դատավարության օրինականության արտաքին տպավորություն ստեղծելու միջոցի:

Նույնքան մտահոգիչ են գործի նյութերին հասանելիության սահմանափակումները: Պաշտպանությանը 422 հատորից բաղկացած քրեական գործի նյութերը տրամադրվել են ընդամենը քսաներեք օր առաջ: Բոլոր փաստաթղթերը ներկայացվել են միայն ադրբեջաներեն, մեղադրական եզրակացությունը հանձնվել է նախնական դատական նիստից անմիջապես առաջ և պարունակել է էական թարգմանական սխալներ: Բացի այդ, պաշտպանությունը զրկված է եղել տեսաձայնային ապացույցներին լիարժեք ծանոթանալու հնարավորությունից, ինչը գործնականում անհնար է դարձրել արդյունավետ պաշտպանության նախապատրաստումը:

ICJ-ն մանրամասն անդրադառնում է նաև հրապարակային դատաքննության սկզբունքի խախտմանը: Դատական նիստերի գերակշիռ մասն անցկացվել է փակ պայմաններում: Դրանց մասնակցել են միայն պետական լրատվամիջոցների ներկայացուցիչները, մինչդեռ միջազգային դիտորդների, օտարերկրյա լրագրողների, դիվանագիտական ներկայացուցիչների և մեղադրյալների ընտանիքների անդամների ներկայությունն ամբողջ դատավարության ընթացքում մերժվել է, ինչի հետևանքով որևէ անկախ միջազգային կազմակերպություն հնարավորություն չի ունեցել անմիջականորեն դիտարկելու դատական նիստերը և գնահատական ձևավորելու դատավարության ընթացքի վերաբերյալ:

Զեկույցում արձանագրված են նաև օրինականության սկզբունքի խախտման վերաբերյալ լուրջ մտահոգություններ: Ռուբեն Վարդանյանին ներկայացված

մեղադրանքների մի մասը վերաբերում էր դեռևս 1988 թվականից սկսվող իրադարձություններին, այն դեպքում, երբ այդ ժամանակ նա սովորում էր Մոսկվայի պետական համալսարանում և որևէ պաշտոն չէր զբաղեցնում Արցախում: ICJ-ն նման մեղադրանքները գնահատում է որպես քրեական իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ օրինականության սկզբունքի խախտման դրսևորում:

Ձեկույցում տեղ են գտել նաև խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի, կեղծված փաստաթղթերի և հարկադրանքի միջոցով ցուցմունքներ ստանալու վերաբերյալ լուրջ պնդումներ: Ռուբեն Վարդանյանը հայտարարել է, որ իր ստորագրությամբ ներկայացված փաստաթղթերը կեղծվել են, իսկ նախկինում հայրենադարձված հայ գերիների վկայությունները, ինչպես նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների տվյալները վկայում են խոշտանգումների և վատ վերաբերմունքի շարունակական պրակտիկայի մասին:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ 2025 թվականի սեպտեմբերի 3-ին Ադրբեյջանի կառավարության որոշմամբ փակվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակությունը՝ վերացնելով հայ կալանավորվածների նկատմամբ կանոնավոր և անկախ միջազգային մոնիթորինգ իրականացնող վերջին միջազգային կառույցը: Նույն ժամանակահատվածում Ադրբեյջանը պահանջեց նաև դադարեցնել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) գործունեությունը երկրում: Այն փաստը, որ միջազգային վերահսկողության հնարավորությունները կտրուկ սահմանափակվեցին հենց այն ժամանակաշրջանում, երբ ընթանում էին այս դատավարությունները, ICJ-ի արձանագրած խախտումներին հաղորդում է լրացուցիչ ծանրություն և նշանակություն:

ICJ-ն, գնահատելով ներկայացված փաստական նյութերի ամբողջությունը, եզրակացնում է, որ *Արցախի Հանրապետության նախկին ղեկավարների և մյուս*

հայ կալանավորվածների դատավարությունները չեն կարող դիտարկվել որպես միջազգային իրավունքի պահանջներին համապատասխանող արդար դատաքննություններ: Դրանք, ըստ հանձնաժողովի, մեկուսացված կամ պատահական խախտումների հետևանք չեն, այլ այն նույն համակարգային խնդիրների առավել ծայրահեղ դրսևորումը, որոնք կազմակերպությունը շուրջ մեկ տասնամյակ արձանագրել է Ադրբեջանի ներսում ընդդիմադիր քաղաքական գործիչների, լրագրողների, իրավապաշտպանների և անկախ փաստաբանների նկատմամբ իրականացվող քաղաքական հետապնդումների ուսումնասիրության ընթացքում:

Հարկ է նկատել, որ զեկույցի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ICJ-ն բացահայտ ընդունում է իր ուսումնասիրության ապացուցողական սահմանափակումները: Քանի որ անկախ միջազգային դիտորդներին չի թույլատրվել մասնակցել դատական նիստերին, հանձնաժողովը ստիպված է եղել հիմնվել պաշտպանության ներկայացրած նյութերի, հրապարակային դատական փաստաթղթերի և բաց աղբյուրների վրա: Սակայն այդ հանգամանքը չի նվազեցնում զեկույցի արժեքը: Ընդհակառակը, ICJ-ն ցուցաբերում է ակնհայտ մեթոդաբանական զսպվածություն՝ հրաժարվելով եզրակացություններ անել այն հարցերի վերաբերյալ, որոնք հնարավոր չի եղել բավարար չափով ստուգել: Այդ պատճառով նրա ներկայացրած գնահատականները ոչ միայն պահպանել են մասնագիտական հավասարակշռությունը, այլև դարձել են առավել վստահելի: Իրավական ուսումնասիրության արժանիքը չափվում է ոչ թե եզրակացությունների կտրուկությամբ, այլ ապացույցների նկատմամբ կիրառված քննադատական չափանիշներով, և այս առումով ICJ-ի զեկույցը միջազգային իրավական փաստաթղթավորման բարձր օրինակ է:

Հայ գերիների իրավունքների պաշտպանությունը չի կարող հիմնվել միայն քաղաքական հայտարարությունների, դիվանագիտական գնահատականների կամ բարոյական դատողությունների վրա: Այն պահանջում է փաստերի, միջազգային իրավունքի նորմերի և անկախ մասնագիտական գնահատականների վրա

հիմնված հետևողական և փաստարկված աշխատանք: Միայն այդպիսի մոտեցումն է հնարավորություն տալիս մարդու իրավունքների խախտումները ներկայացնել ոչ թե որպես քաղաքական հակամարտության բաղադրիչ, այլ որպես համընդհանուր իրավական խնդիր, որը վերաբերում է միջազգային իրավակարգի հիմնարար արժեքներին:

Այս գեկույցը կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ փաստաթղթավորում է հայ ռազմագերիների, քաղաքացիական անձանց և Արցախի նախկին ղեկավարների նկատմամբ իրականացված դատավարությունները: Նրա առավել արժեքավոր ներդրումն այն է, որ առաջին անգամ այդ դատավարություններն ուսումնասիրվում են Ադրբեջանի արդարադատության համակարգի ընդհանուր կառուցվածքային խնդիրների համատեքստում: Այս տեսանկյունից հայ կալանավորվածների գործերը ներկայացվում են ոչ թե որպես բացառություն, այլ որպես այն դատական համակարգի բնական հետևանք, որտեղ փաստաբանների անկախությունը սահմանափակված է, դատարանների ինքնուրույնությունը՝ խաթարված, իսկ արդար դատաքննության հիմնարար երաշխիքները՝ աստիճանաբար վերածված ձևականության:

Այս հանգամանքը փոխում է նաև հայ գերիների իրավունքների պաշտպանության իրավական ընկալումը: Եթե խնդիրը դիտարկվի միայն առանձին դատավարությունների մակարդակում, ապա յուրաքանչյուր խախտում կարող է ներկայացվել որպես մեկուսացված դեպք կամ դատավարական սխալ: Սակայն, երբ նույն խախտումները դիտարկվում են տասնամյակ շարունակ արձանագրված համակարգային խնդիրների համատեքստում, ակնհայտ է դառնում, որ խոսքը ոչ թե առանձին գործերի, այլ արդարադատության ինստիտուցիոնալ ճգնաժամի մասին է: Այդ պատճառով հայ գերիների իրավունքների պաշտպանությունն անբաժանելիորեն կապված է Ադրբեջանում իրավունքի գերակայության, դատական իշխանության անկախության և մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակի հետ:

Սա թերևս ICJ-ի գեկույցի ամենակարևոր ուղերձն է: Այն հիշեցնում է, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող լինել ընտրովի կամ պայմանավորված անձի ազգային պատկանելությամբ, քաղաքական հայացքներով կամ զինված հակամարտության հանգամանքներով: Եթե անկախ դատարանի, արդյունավետ պաշտպանության և դատավարական հավասարության սկզբունքները խախտվում են մեկ խմբի նկատմամբ, վաղ թե ուշ նույն մեխանիզմները կիրառվում են նաև մյուսների նկատմամբ: Իրավունքի գերակայությունը կա՛մ գործում է բոլորի համար, կա՛մ աստիճանաբար դադարում է գործել որևէ մեկի համար:

Վարդան Պողոսյան

ԳԼՈՒԽ IV. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Միջազգային չափանիշները

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ) սահմանում է, որ «բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Ցանկացած անձ, ում նկատմամբ ներկայացված է քրեական մեղադրանք, կամ ում քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ վեճ է քննվում, իրավունք ունի արդար և հրապարակային դատաքննության՝ օրենքով ստեղծված իրավասու, անկախ և անաչառ դատարանի կողմից»: Նույնաբովանդակ երաշխիքներ ամրագրված են նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածում: Դատարանի իրավասության, անկախության և անաչառության պահանջը բացառություններ չի ճանաչում: Պետությունները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դատական իշխանության անկախությունն ապահովելու համար՝ սահմանադրությամբ կամ օրենքներով դատավորներին պաշտպանելով ցանկացած տեսակի քաղաքական ազդեցությունից: Դատավորների անկախությունն ու անաչառությունը պահպանելու համար անհրաժեշտ է նաև պաշտպանել նրանց շահերի բախումից, ճնշումից և ահաբեկումից:

ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածի շրջանակում անաչառության պահանջը նշանակում է, որ դատավորները պետք է զերծ մնան անձնական կողմնակալությունից, նախապաշարմունքից կամ գործի վերաբերյալ նախապես ձևավորված կարծիքից և չպետք է մեկ կողմի շահերն առաջ մղեն մյուս կողմի հաշվին: Մարդու

իրավունքների կոմիտեն նաև հաստատել է, որ դատարանը պետք է անաչառ երևա ողջամիտ դիտորդի համար:

14-րդ հոդվածը սահմանում է նաև պաշտպանության իրավունքի նվազագույն երաշխիքները: Մասնավորապես, 3-րդ կետի «դ» ենթակետով յուրաքանչյուր ոք իրավունք ունի ներկա լինել իր դատավարությանը և պաշտպանել իրեն անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով: Եթե անձը փաստաբան չունի, նա պետք է տեղեկացվի այդ իրավունքի մասին: Արդարադատության շահերից ելնելով՝ անհրաժեշտության դեպքում նրան պետք է նշանակվի փաստաբան, իսկ բավարար միջոցներ չունենալու դեպքում փաստաբան պետք է տրամադրվի անվճար:

14-րդ հոդվածի դրույթները կիրառելի են բոլոր դատարանների և տրիբունալների նկատմամբ՝ ընդհանուր իրավասության, մասնագիտացած, քաղաքացիական կամ զինվորական: Քաղաքացիական անձանց զինվորական դատարաններում դատելը պետք է լինի բացառիկ և հիմնավորվի օբյեկտիվ ու լուրջ պատճառներով, մասնավորապես՝ ընդհանուր դատարանների կողմից այդ գործերը քննելու անկարողությամբ: Մարդու իրավունքների կոմիտեն նշել է, որ զինվորական դատարաններում քաղաքացիական անձանց դատելը լուրջ խնդիրներ է առաջացնում արդարադատության հավասարության, անաչառության և անկախության տեսանկյունից: Միջազգային չափանիշների համաձայն՝ զինվորական դատարանները չպետք է օգտագործվեն քաղաքացիական անձանց դատելու համար:

Արդար դատաքննության իրավունքը ներառում է արդար և հրապարակային լսման երաշխիքը: Դա ենթադրում է ուղղակի կամ անուղղակի ազդեցության, ճնշման, ահաբեկման կամ միջամտության բացակայություն: Կողմերի հավասարության սկզբունքը դատարանների և տրիբունալների առջև հավասարության իրավունքի անբաժանելի մասն է և պահանջում է, որ վարույթի բոլոր կողմերը վերաբերմունքի հարցում չխտրականացվեն: Յուրաքանչյուր կողմ պետք է ունենա իր դիրքորոշումը ներկայացնելու իրական հնարավորություն այնպիսի պայմաններում, որոնք նրան էականորեն անբարենպաստ վիճակի մեջ չեն դնում մյուս կողմի համեմատ: Յուրաքանչյուր կողմ պետք է կարողանա վիճարկել մյուս կողմի փաստարկներն ու ապացույցները՝ առանց ճնշման, ահաբեկման կամ միջամտության: Կողմերի հավասարության սկզբունքը ներառում է նաև մեղադրյալի իրավունքը՝ նույն պայմաններով կանչել, հարցաքննել և խաչաձև հարցաքննել վկաներին, ինչպես մեղադրող կողմը: Փաստաբանները պետք է ունենան համապատասխան տեղեկություններին, գործի նյութերին և փաստաթղթերին ծանոթանալու հնարավորություն:

Լսումների հրապարակայնությունն արդար դատաքննության իրավունքի կարևոր երաշխիք է: Դատարանները պետք է տրամադրեն բավարար տեղեկատվություն և ստեղծեն անհրաժեշտ պայմաններ, որպեսզի շահագրգիռ հասարակության անդամները կարողանան ներկա գտնվել դատական նիստերին: Այս պահանջն ապահովում է դատական համակարգի հանրային վերահսկողությունը:

Հրապարակային լսման իրավունքը բացարձակ չէ, և միջազգային իրավունքը ճանաչում է, որ բացառիկ հանգամանքներում դրա սահմանափակումը կարող է թույլատրելի լինել: Նման սահմանափակման օրինական հիմքեր կարող է լինել ազգային անվտանգության, հասարակական կարգի կամ այլ անձանց իրավունքների ու անձնական կյանքի պաշտպանության անհրաժեշտությունը: Սակայն ցանկացած սահմանափակում պետք է խիստ անհրաժեշտ լինի այդ նպատակների համար և լինի համաչափ, այսինքն՝ չպետք է առկա լինի նույն նպատակին հասնելու ավելի քիչ սահմանափակող միջոց: Դատական նիստերին կամ դատավարական գործընթացներին մուտքի մերժումն առանց բավարար հիմնավորման կամ համաչափության խաթարում է թափանցիկությունը, սահմանափակում արդյունավետ հանրային վերահսկողությունը և կարող է հակասել ՔՔԻՄԴ-ով և ՄԻԵԿ-ով երաշխավորված արդար ու հրապարակային դատաքննության իրավունքին:

Յուրաքանչյուր անձ, ում ներկայացվել է քրեական մեղադրանք, իրավունք ունի անվճար օգտվելու թարգմանչի ծառայությունից, եթե չի հասկանում կամ չի խոսում դատարանում օգտագործվող լեզվով: Արդարության և կողմերի հավասարության սկզբունքներից բխող այս իրավունքը գործում է բանավոր վարույթի բոլոր փուլերում և տարածվում է բոլոր անձանց վրա՝ ներառյալ ոչ քաղաքացիները:

Անմեղության կանխավարկածը պահանջում է, որ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ պետք է համարվի անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով: Այս իրավունքն ապացուցման բեռը դնում է մեղադրող կողմի վրա, երաշխավորում է, որ մեղքը չի կարող ենթադրվել, մինչև այն չապացուցվի ողջամիտ կասկածից վեր, և ապահովում է, որ կասկածը մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի:

Դատական իշխանության անկախությունը

Ադրբեջանում դատավորները հաճախ ենթարկվում են գործադիր իշխանության անհարկի ազդեցությանը կամ վերահսկողությանը, ինչը սահմանափակում է անկախ որոշումներ կայացնելու նրանց կարողությունը: Դատավորների նշանակման և կարգապահական վարույթները թափանցիկ չեն, ինչն առաջացնում է քաղաքական միջամտության հնարավորություն դատավորների ընտրության,

առաջխաղացման և հեռացման գործընթացներում: Դատավորների կախվածությունը դատախազության դիրքորոշումից հանգեցնում է 99 տոկոսից ավելի մեղադրական դատավճիռների ցուցանիշի, ինչը ցույց է տալիս, որ դատարանները սովորաբար և գործնականում հանդես են գալիս որպես մեղադրող կողմի շարունակություն և ոչ թե որպես չեզոք արբիտրներ: Այդ ցուցանիշն արտացոլում է համակարգային վիճակ, երբ քրեական վարույթի ելքը փաստացի որոշված է լինում դեռևս դատաքննությունից առաջ: Անաչառ արդարադատություն իրականացնելու այս ձախողումը խաթարում է ամբաստանյալների իրավունքները և հասարակության վստահությունն արդարադատության իրականացման նկատմամբ: Դատական անկախության բացակայությունը, որը խորացվում է գործադիր իշխանության միջամտությամբ, նպաստում է քաղաքական հետապնդումների հանդեպ հանդուրժողականությանը և մարդու իրավունքների իրականացման նկատմամբ լայնածավալ ճնշումներին:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ բարձր հանրային հետաքրքրություն ունեցող դատավարությունները տեղի են ունեցել հետպատերազմյան միջավայրում, որը բնութագրվել է ազգայնական ուժեղ տրամադրություններով և դատվող անձանց նկատմամբ թշնամական վերաբերմունքով: Մարդու իրավունքների ոլորտի մի իրավաբան նշել է. «Սկզբում հայ գերիներին վերաբերվում էին որպես ռազմական ավարի: Դատավարությունները պարզապես ներկայացումներ էին՝ առանց որևէ անաչառության»: Մարդու իրավունքների կազմակերպությունները նկարագրել են խտրականության և թշնամանքի լայն տարածումը, նշել, որ վարույթները, ըստ երևույթին, գործադիր իշխանության կողմից օգտագործվել են որպես գործիք՝ հակամարտությանը հաջորդած շրջանում սեփական քաղաքական դիրքերն ամրապնդելու համար:

Իր 2023 թվականի զեկույցում Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ECRI) նշել է, որ հայերի նախաձեռնած դատական վարույթները, ըստ տեղեկությունների, համակարգված կերպով ձախողվում են խտրականության պատճառով, և որ, տարբեր աղբյուրների համաձայն, որոշ դեպքերում «կեղծ մեղադրանքներ են առաջադրվում, մասնավորապես ազգային կամ կրոնական փոքրամասնությունների խմբերին պատկանող անձանց դեմ»:

Կոռուպցիան արդարադատության համակարգում

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (OHCHR) կողմից Ադրբեյջանի՝ 2023 թվականի Համընդհանուր պարբերական վերանայման շրջանակում պատրաստված ամփոփագրում ներկայացված պնդումների համաձայն՝ Ադրբեյջանի դատական համակարգում առկա է լայնածավալ կոռուպցիայի օրինաչափություն, իսկ բովանդակային

դատաիրավական բարեփոխումների հեռանկարը բացակայում է²²⁹: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (CESCR) Ադրբեջանի պարբերական զեկույցի վերաբերյալ իր վերջին Եզրափակիչ դիտարկումներում (2021 թ.) մտահոգություն է հայտնել պետական հաստատություններում, հատկապես դատական համակարգում առկա կոռուպցիայի, ինչպես նաև բարձրաստիճան կոռուպցիոն գործերի արդյունավետ քննության, հետապնդման և դատական լուծման բացակայության կապակցությամբ²³⁰: CESCR-ն առաջարկել է իրականացնել համապարփակ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ կոռուպցիայի դեմ պայքարելու, դատական հաշվետվողականությունը ամրապնդելու և ազգային պրակտիկան մարդու իրավունքների միջազգային իրավունքի ու չափանիշների հետ համապատասխանեցնելու նպատակով:

Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը (GRECO), որի անդամ է նաև Ադրբեջանը, իր վերջին հրապարակային հասանելի զեկույցում Ադրբեջանի կոռուպցիոն վիճակը գնահատել է հետևյալ կերպ. «Ադրբեջանում կոռուպցիան հաճախ բնութագրվում է որպես համակարգային խնդիր, որը լայնորեն ազդում է հասարակության վրա»: Transparency International-ի 2024 թվականի Կոռուպցիայի ընկալման ինդեքսում Ադրբեջանը ստացել է 22 միավոր 100-ից, ինչը տարածաշրջանում ամենացածր ցուցանիշն է Ռուսաստանի Դաշնության հետ միասին և էապես ցածր է տարածաշրջանային միջին՝ 35 միավորից:

Դատական համակարգում կոռուպցիան խորացնում և ամրապնդում է այս զեկույցում արձանագրված՝ իրավաբանական մասնագիտության անկախության կառուցվածքային թերությունները: Երբ դատավորների նշանակումը, առաջխաղացումը և կարգապահական վարույթները ենթակա են գործադիր իշխանության ազդեցությանը, իսկ դատական ելքերը կարող են կախված լինել կոռուպցիոն գործելակերպից, դատավորների համար խրախուսումների համակարգը խթանում է մեղադրող կողմին համակերպվելը, ոչ թե անաչառ դատական քննությունը:

Դատավարական իրավունքները բարձր հանրային հետաքրքրություն ունեցող գործերում

2020 թվականին Լեոնային Ղարաբաղում և դրա շուրջը տեղի ունեցած ռազմական գործողություններից հետո 16 հայ կալանավորված անձ քրեական հետապնդման է ենթարկվել Ադրբեջանում:

Դատավարությունները սկսվել են 2025 թվականի հունվարի 17-ին Բաքվի զինվորական դատարանում՝ դատավոր Ջեյնալ Ազաևի նախագահությամբ և դատավորներ Անար Ռզաևի ու Ջամալ Ռամազանովի մասնակցությամբ: Գործերը

փոխանցվել են Բաքվի զինվորական դատարան, թեև ամբաստանյալներից առնվազն ութը քաղաքացիական անձինք էին, ուստի, միջազգային իրավունքի և չափանիշների համաձայն, նրանք պետք է դատվեին ընդհանուր, ոչ թե զինվորական դատարանում: Հրապարակայնորեն հասանելի հաղորդումների համաձայն՝ այդ դատավարություններում առկա են արդարադատության հիմնական երաշխիքները խախտող գործելակերպեր. «ստեղծվել է հիմնովին անարդար ընթացակարգային իրավիճակ, որտեղ պաշտպանությունը զրկված է մեղադրանքները վիճարկելու կամ անմեղությունը ապացուցելու որևէ իրատեսական հնարավորությունից: Նման պայմաններում արդար դատաքննության բուն հասկացությունը վերածվում է ձևականության՝ ամբողջությամբ զուրկ բովանդակությունից»²⁴¹:

Դատավարությունները հիմնականում անցկացվել են փակ դռների հետևում, և մուտք է տրվել միայն պետական լրատվամիջոցներին: Միջազգային դիտորդներին, օտարերկրյա լրատվամիջոցներին և ամբաստանյալների ընտանիքների անդամներին չի թույլատրվել ներկա գտնվել նիստերին: Թափանցիկության բացակայության պատճառով հասանելի տեղեկատվության մեծ մասը վերաբերում է Վարդանյանի առանձին դատավարությանը:

Միավորված գործով ամբաստանյալներին առաջադրվել է 42 մեղադրանք, այդ թվում՝ ահաբեկչական գործողություններ, մարդկության դեմ հանցագործություններ և Ադրբեջանի պետության դեմ ուղղված հանցագործություններ: Ռուբեն Վարդանյանի առանձին գործում առաջադրված մեղադրանքները ներառել են ահաբեկչության ֆինանսավորումը, հարկադիր տեղահանությունները, խոշտանգումները և սահմանն ապօրինի հատելը:

Վարդանյանը Լեռնային Ղարաբաղում հանրային գործառույթներ ստանձնել է 2022 թվականի վերջին, սակայն մեղադրող կողմը նրան առաջադրել է նաև 1988 թվականից սկսվող՝ Լեռնային Ղարաբաղի առաջին հակամարտության հետ կապված մեղադրանքներ, չնայած այն ապացույցներին, որ այդ ժամանակ նա Մոսկվայի պետական համալսարանի ուսանող էր: 1988 թվականին ենթադրաբար կատարված արարքների համար Վարդանյանին հետապնդելը՝ նրա՝ հանրային պաշտոն ստանձնելուց ավելի քան երեք տասնամյակ առաջ ենթադրվող իրադարձությունների հիմքով, լուրջ մտահոգություններ է առաջացնում օրինականության սկզբունքի տեսանկյունից: Վարդանյանը համապատասխան ժամանակահատվածում որևէ քաղաքական պաշտոն չի զբաղեցրել և չէր կարող կանխատեսել, որ այդ ժամանակաշրջանի իրադարձությունները հետագայում՝ քաղաքական պաշտոն ստանձնելուց հետո, կդառնան քրեական մեղադրանքի հիմք: Ենթադրյալ արարքների և քրեական հետապնդման միջև երկար

Ժամանակային հեռավորությունը, ինչպես նաև այն, որ մեղադրանքները ներկայացվել են միայն այն բանից հետո, երբ Վարդանյանը քաղաքական վեճում ղեկավար պաշտոն է ստանձնել, վկայում են քրեական օրենքի կամայական կիրառման մասին: Օրինականության սկզբունքը պահանջում է, որ քրեական պատասխանատվությունը լինի կանխատեսելի, իսկ քրեական օրենքը կիրառվի հստակությամբ և ճշգրտությամբ, ոչ թե ընտրողաբար՝ անձի հետագա քաղաքական գործունեության հիմքով²⁴⁶:

Իրավագործության և կիրառելի իրավունքի հարցեր

Կալանավորված անձանց գերեվարման պահին կիրառելի իրավական դաշտի հարցը վիճելի է: Անվիճելի է և ԿԽՄԿ-ի կողմից հաստատված փաստը, որ առկա է եղել զինված հակամարտություն, որի նկատմամբ կիրառելի էին միջազգային հումանիտար իրավունքի կանոնները: 1993 թվականից ի վեր Հայաստանը Լեռնային Ղարաբաղում օկուպացնող ուժ է եղել, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Չիրադրվը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով արձանագրել է, որ Հայաստանը «արդյունավետ վերահսկողություն» է իրականացրել Լեռնային Ղարաբաղի և հարակից տարածքների նկատմամբ: Արդարադատության միջազգային դատարանը 2020 և 2023 թվականների իրադարձությունները բնութագրել է որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև «ռազմական գործողություններ»՝ առանց վերջնական դիրքորոշում հայտնելու հակամարտության ճշգրիտ դասակարգման վերաբերյալ:

Հայաստանի և Ադրբեջանի դիրքորոշումները հիմնականում կենտրոնանում են 2020 թվականի նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարության վրա, որը երկու կողմերն էլ ընդունել են որպես 2020 թվականից հետո հակամարտության կարգավորման շրջանակ: Հայաստանը գտնում է, որ 2020 թվականի ռազմական գործողությունների ընթացքում գերեվարված անձանց թվում կան ռազմագերիներ, որոնց ազատ արձակումը պահանջվում է Եռակողմ հայտարարությամբ²⁵¹: Ադրբեջանի դիրքորոշումն այն է, որ կալանավորված անձինք ադրբեջանական օրենսդրությամբ քրեական հանցագործություններ են կատարել և չեն ընդգրկվում Եռակողմ հայտարարության կարգավորման մեջ: Ադրբեջանը 2023 թվականի սեպտեմբերյան գործողությունը բնութագրում է որպես սեփական տարածքի նկատմամբ ինքնիշխանության վերականգնում և պնդում է, որ կալանավորված անձինք ենթակա են ներպետական քրեական հետապնդման:

Այս զեկույցը չի հավակնում լուծել զինված հակամարտության դասակարգման հարցը: Այնուամենայնիվ, անկախ նրանից՝ հակամարտությունը միջազգային է, թե ոչ միջազգային, կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքի և նրանց արդար դատաքննության կանոնները կարգավորվում են նաև սովորույթային

միջազգային հումանիտար իրավունքով²⁵⁴: Բացի այդ, մարդու իրավունքների միջազգային իրավունքը շարունակում է կիրառվել զինված հակամարտությունների ժամանակ, նույնիսկ երբ կիրառելի է նաև միջազգային հումանիտար իրավունքը: Մարդու իրավունքների կոմիտեն ՔՔԻՄԴ-ի առնչությամբ հաստատել է, որ այն «կիրառվում է նաև զինված հակամարտությունների իրավիճակներում, որոնց նկատմամբ կիրառելի են միջազգային հումանիտար իրավունքի կանոնները: Թեև Դաշնագրով նախատեսված որոշ իրավունքների մեկնաբանության համար միջազգային հումանիտար իրավունքի ավելի կոնկրետ կանոնները կարող են առանձնահատուկ նշանակություն ունենալ, իրավունքի երկու ոլորտները լրացնում են միմյանց, ոչ թե բացառում»:

Որոշ երաշխիքներ կիրառելի են անկախ հակամարտության դասակարգումից: Ժնևյան չորս կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածը տարածվում է բոլոր զինված հակամարտությունների վրա՝ թե՛ միջազգային, թե՛ ոչ միջազգային: Այն առնվազն պահանջում է մարդասիրական վերաբերմունք այն բոլոր անձանց նկատմամբ, որոնք ակտիվ մասնակցություն չեն ունենում ռազմական գործողություններին, այդ թվում՝ կալանավորման հետևանքով մարտից դուրս գտնվողների: Այն արգելում է կյանքի և անձի դեմ բռնությունը, դաժան վերաբերմունքն ու խոշտանգումները, ինչպես նաև դատավճիռների կայացումը և մահապատժի իրականացումն առանց օրենքով սահմանված կարգով կազմավորված դատարանի կողմից նախապես կայացված դատական ակտի, որն ապահովում է անհրաժեշտ համարվող բոլոր դատական երաշխիքները: Ժնևյան կոնվենցիաների Լրացուցիչ I և II արձանագրությունները, որոնք համապատասխանաբար վերաբերում են միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտություններին, նախատեսում են լրացուցիչ պաշտպանություններ: Այս համատեքստում առանձնապես կարևոր է Լրացուցիչ I արձանագրության 75-րդ հոդվածը, որը սահմանում է մի շարք դատական և այլ երաշխիքներ, այդ թվում՝ պահանջ, որ պատիժները նշանակվեն անկախության և անաչառության էական երաշխիքներ ապահովող դատարանի կողմից: Թեև Ադրբեջանը Լրացուցիչ արձանագրություններից ոչ մեկի կողմ չէ, դրանցում ամրագրված հիմնարար երաշխիքները, ներառյալ Լրացուցիչ I արձանագրության 75-րդ հոդվածը, սովորության միջազգային հումանիտար իրավունքի մաս են՝ անկախ նրանից՝ հակամարտությունը միջազգային է, թե ոչ միջազգային: Դրանք ներառում են կամայական ազատագրկման արգելքը և այն կանոնը, որ «ոչ ոք չի կարող դատապարտվել կամ պատժի ենթարկվել, բացառությամբ այն դեպքի, երբ տեղի է ունեցել արդար դատաքննություն՝ բոլոր էական դատական երաշխիքների ապահովմամբ»: Այս պարտավորությունները պարտադիր են Ադրբեջանի համար՝

անկախ այն բանից, թե ինչպես է այն դասակարգում հակամարտությունը կամ կալանավորված անձանց, ինչպես նաև անկախ այդ անձանց քաղաքացիությունից:

Եթե ռազմական գործողությունները դասակարգվում են որպես միջազգային զինված հակամարտություն, ապա հակառակ կողմի կողմից գերի վերցված անձինք Երրորդ Ժնևյան կոնվենցիայով ունեն ռազմագերու կարգավիճակի իրավունք, եթե բավարարում են 4(A) հոդվածի չափանիշները: Այդ հոդվածը ներառում է հակամարտության կողմի զինված ուժերի անդամներին, այդ զինված ուժերի մաս կազմող աշխարհագորային կամ կամավորական ջոկատների անդամներին և այլ նախատեսված կատեգորիաների: Ռազմագերիները, բացի մարդասիրական վերաբերմունքի և դատական երաշխիքների վերոհիշյալ պաշտպանությունից, ակտիվ ռազմական գործողությունների ավարտից հետո պետք է առանց ուշացման ազատ արձակվեն և հայրենադարձվեն:

Կալանավորված անձանց առաջադրված մեղադրանքները վերաբերում են զինված հակամարտության համատեքստում կատարված ենթադրյալ արարքներին: Ադրբեջանի Քրեական օրենսգիրքը այդ ենթադրյալ հանցագործությունները բնութագրում է որպես միջազգային հումանիտար իրավունքի խախտումներ՝ ներառյալ խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները (100-րդ հոդված), ցեղասպանությունը (103-րդ հոդված), պատերազմի օրենքների և սովորույթների խախտումը (115-րդ հոդված) և զինված հակամարտության ընթացքում միջազգային հումանիտար իրավունքի խախտումը (116-րդ հոդված):

Քաղաքացիական անձանց զինվորական դատարաններում դատելն անհամատեղելի է մարդու իրավունքների միջազգային իրավունքի հետ: Մարդու իրավունքների կոմիտեն ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածով պետության պարտավորությունների վերաբերյալ նշել է, որ «քաղաքացիական անձանց զինվորական կամ հատուկ դատարաններում դատելը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել արդարադատության հավասար, անաչառ և անկախ իրականացման առումով»²⁶³: Ընդհանուր առմամբ, ժամանակակից չափանիշները, ներառյալ զինվորական տրիբունալների միջոցով արդարադատության իրականացման վերաբերյալ ՄԱԿ-ի նախագիծ-սկզբունքները, սահմանում են. «Զինվորական դատարանները, որպես սկզբունք, չպետք է իրավասություն ունենան քաղաքացիական անձանց դատելու: Բոլոր հանգամանքներում պետությունը պետք է ապահովի, որ ցանկացած բնույթի քրեական հանցագործության մեջ մեղադրվող քաղաքացիական անձինք դատվեն քաղաքացիական դատարանների կողմից»: Բացի այդ, «զինվորական դատարանների իրավագործությունը պետք է սահմանափակվի զինվորական անձնակազմի կողմից կատարված խիստ

զինվորական բնույթի իրավախախտումներով»: Ըստ դատավորների անկախության հարցերով ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցողի՝ այս սկզբունքներն արտացոլում են ժամանակակից միջազգային իրավունքի զարգացումը: Ամբաստանյալների մեծ մասը նախկին de facto վարչակազմում զբաղեցրել է քաղաքական, ոչ թե զինվորական պաշտոններ:

2020 թվականի նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարությունը, որը ստորագրել են Ադրբեյջանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը և Ռուսաստանի Դաշնության նախագահը, 8-րդ կետով նախատեսում էր «ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց փոխանակում»²⁶⁷: Այն հարցը, թե ներկայումս կալանավորված անձինք ընդգրկվում են արդյոք 8-րդ կետի շրջանակում, մնում է վիճելի:

Հայ կալանավորված անձանց դեմ վարույթները քննվել են Բաքվի զինվորական դատարանում: Քրեական մեղադրանքները հիմնականում հիմնվել են Ադրբեյջանի Քրեական օրենսգրքի դրույթների վրա՝ զուգակցվելով միջազգային իրավունքի հանցագործություններին, օրինակ՝ պատերազմի օրենքների և սովորույթների խախտմանը և զինված հակամարտության ընթացքում միջազգային հումանիտար իրավունքի խախտմանը վերաբերող հղումներով²⁶⁸: Ադրբեյջանի Քրեական դատավարության օրենսգրքի 67-70-րդ հոդվածների համաձայն՝ նման հանցագործությունների վերաբերյալ իրավագործությունը, հաշվի առնելով մեղադրանքների բնույթն ու ծանրությունը, սովորաբար պետք է պատկաներ Ասիզի դատարանին՝ որպես առաջին ատյանի դատարանի: ՔԴՕ-ի 69.2-րդ հոդվածը սահմանում է, որ «Ադրբեյջանի Հանրապետության Ասիզի դատարանը քննում է ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին վերաբերող գործերը և այլ հարցերը»:

Գործերը զինվորական դատարան ուղարկելու և պատերազմական հանցագործությունների հետ կապված մեղադրանքներ ներառելու որոշումը հարց է առաջացնում՝ արդյոք իշխանություններն այդ կալանավորված անձանց դիտարկում են որպես զինված հակամարտության մասնակիցներ, հետևաբար արդյոք պետք է կիրառվեն Երրորդ Ժնևյան կոնվենցիայի երաշխիքները:

ՔԴՕ-ի 68.2-րդ հոդվածը սահմանում է. «Զինվորական դատարանները քննում են պատերազմին և զինվորական ծառայությանը վերաբերող այն գործերը, որոնք մեծ հանրային վտանգ չեն ներկայացնում և վերաբերում են ոչ ծանր հանցագործություններին, ինչպես նաև զինվորական անձնակազմի կողմից կատարված այդպիսի հանցագործություններին վերաբերող գործերը...»: ՔԴՕ-ի 70.2-րդ հոդվածը սահմանում է. «Ադրբեյջանի Հանրապետության զինվորական ասիզի դատարանը քննում է պատերազմին և զինվորական ծառայությանը

վերաբերող ծանր և առանձնապես ծանր գործերը, ինչպես նաև զինվորական անձնակազմի կողմից կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին վերաբերող գործերը և հարցերը...»:

ՔԴՕ-ի իրավագործության վերաբերյալ դրույթներն էական նշանակություն ունեն: 68.2 և 70.2 հոդվածները զինվորական դատարանների իրավագործությունը սահմանափակում են «պատերազմին և զինվորական ծառայությանը վերաբերող» ու «զինվորական անձնակազմի կողմից կատարված» հանցագործություններով: Այս վարույթների ամբաստանյալների մեծ մասը զինվորական անձնակազմ չէր. նրանք նախկին de facto վարչակազմում զբաղեցրել են քաղաքական պաշտոններ: Հետևաբար, նրանց գործերը զինվորական դատարանին հանձնելը հակասում է Ադրբեջանի սեփական քրեական դատավարական օրենսդրությամբ սահմանված իրավագործության չափանիշներին:

Իրականում վարույթները, ըստ երևույթին, համատեղում են միջազգային իրավունքով նախատեսված հանցագործություններին վերաբերող հղումներն Ադրբեջանի Քրեական օրենսգրքի ներպետական քրեական իրավունքի դրույթների հետ՝ առանց երկու իրավական դաշտերի հստակ տարանջատման:

Ամբաստանյալների թվում կային ինչպես Լեռնային Ղարաբաղի նախկին de facto վարչակազմում քաղաքական պաշտոն զբաղեցրած անձինք, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի զինվորական կառույցներում և զինված ուժերում ծառայած անձինք: Յուրաքանչյուր ամբաստանյալի համար միջազգային հումանիտար իրավունքի ներքո հասանելի երաշխիքները կախված էին հակամարտության դասակարգումից և տվյալ անձի անհատական գործառույթից: Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակը լուծարվել է 2023 թվականի սեպտեմբերի 20-ի հրադադարի համաձայնագրով՝ նախքան ամբաստանյալների կալանավորումը, սակայն այդ լուծարման հետևանքները հակամարտության ընթացքում զինված ուժերում ծառայած անձանց կարգավիճակի համար հեղինակավոր կերպով չեն որոշվել: Եթե հակամարտությունը դասակարգվեր որպես միջազգային, և այն ամբաստանյալները, որոնք ծառայել էին զինված ուժերում, բավարարեին Երրորդ Ժնևյան կոնվենցիայի 4(A) հոդվածի չափանիշները, նրանք կունենային ռազմագերու կարգավիճակ՝ ներառյալ Երրորդ Ժնևյան կոնվենցիայի դատական երաշխիքները և ակտիվ ռազմական գործողությունների ավարտից հետո առանց ուշացման ազատ արձակվելու և հայրենադարձվելու իրավունքը²⁷⁶: Բացառապես քաղաքական պաշտոններ զբաղեցրած ամբաստանյալները չէին կարող որակվել որպես ռազմագերիներ, սակայն պետք է դիտարկվեին որպես քաղաքացիական անձինք: Որպես քաղաքացիական անձինք, նրանք Չորրորդ Ժնևյան կոնվենցիայով պաշտպանված

անձինք էին և հետապնդման դեպքում իրավունք ունեին օգտվելու այդ կոնվենցիայով նախատեսված դատական երաշխիքներից: Նույնիսկ եթե քաղաքացիական ամբաստանյալներից որևէ մեկը հակամարտության ընթացքում ուղղակիորեն մասնակցել էր ռազմական գործողություններին, այդ մասնակցությունը նրան չէր զրկում գերեվարման պահին իր կարգավիճակից բխող պաշտպանություններից:

Հակամարտության ցանկացած դասակարգման և յուրաքանչյուր ամբաստանյալի կարգավիճակից անկախ՝ ընդհանուր 3-րդ հոդվածի և սովորությանին միջազգային իրավունքի նվազագույն դատական երաշխիքները ներառում են պահանջ, որ դատավճիռներ կարող են կայացվել միայն օրենքով սահմանված կարգով կազմավորված դատարանի կողմից, որն ապահովում է անկախ և անաչառ դատարանի բոլոր դատական երաշխիքները: Ադրբեջանը չի ճանաչել այն ամբաստանյալներին, որոնք հնարավոր է ունենին ռազմագերու կարգավիճակի իրավունք, և քաղաքացիական ամբաստանյալներին չի տրամադրել Չորրորդ Ժնևյան կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունները, ինչի օրինակ է Ռուբեն Վարդանյանի դատավարությունը:

Բացի այդ, կալանավորված անձանցից ոչ մեկը չպետք է դատվեր զինվորական դատարաններում, որոնց իրավազորությունը պետք է սահմանափակվի զինվորական անձնակազմի կողմից կատարված զինվորական բնույթի իրավախախտումներով, և ամեն դեպքում՝ ոչ միջազգային իրավունքի ներքո նախատեսված հանցագործություններով:

Կողմերի հավասարություն

Չնայած անցած ամիսների ընթացքում պաշտպանության կողմի բազմակի պահանջներին՝ Ռուբեն Վարդանյանի դատավարությունում, որպես օրինակելի գործ, շարունակվել են թույլ տրվել կողմերի հավասարության սկզբունքի բազմաթիվ խախտումներ: Դրանք ներառում են մեղադրյալին իր դատավարական իրավունքների և պարտականությունների մասին պատշաճ կերպով չտեղեկացնելը, ինչպես նաև կարևոր իրավական աղբյուրներին՝ Քրեական դատավարության օրենսգրքին, Քրեական օրենսգրքին և ՄԻԵԴ-ի համապատասխան որոշումներին հասանելիություն չտրամադրելը: Իր դեմ ընթացող վարույթին վերաբերող իրավական տեքստերին հասանելիության մերժումն ինքնին խախտում է պաշտպանություն նախապատրաստելու համար բավարար հնարավորություններ ունենալու իրավունքը, քանի որ այն մեղադրյալը, որը չի կարող օգտվել իր նկատմամբ կիրառվող օրենքից, չի կարող իմաստալից կերպով մասնակցել վարույթին:

Արձանագրված այլ դատավարական խախտումները ներառում են հետևյալը.

- Պաշտպանությանը գործի 422-հատորանոց նյութերին հասանելիություն է տրամադրվել միայն երկրորդ դասական նիստից 23 օր առաջ:
- Հիմնական փաստաթղթերի թարգմանությունները չեն տրամադրվել:
- Տեսաապացույցներն ուսումնասիրելու կամ դրանց հասանելիություն ունենալու համար բավարար պայմաններ չեն ապահովվել:
- Ամբաստանյալի և նրա փաստաբանի միջև փաստաթղթերի փոխանակումը սահմանափակվել է:
- Նախնական լսումների վերաբերյալ որոշումները չեն տրամադրվել Ադրբեջանի ՔԴՕ-ի 300-րդ հոդվածով սահմանված եռօրյա ժամկետում:

Դատական նիստերի ընթացքում ամբաստանյալը չի կարողացել արդյունավետ կերպով իրականացնել իր օգտին վկաներ կանչելու իրավունքը, քանի որ դատարանը նախնական լսման ժամանակ բովանդակային կերպով չի քննել այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են ապացույցների թույլատրելիությունը և վկաների շրջանակի որոշումը, իսկ պաշտպանությանը տրամադրվել է անբավարար ժամանակ նախապատրաստվելու համար: Մեղադրող կողմի վկաները հայտնել են, որ տեղյակ չեն եղել Վարդանյանի՝ Լեոնային Ղարաբաղում ունեցած գործունեությունից և չեն ունեցել որևէ բանավոր կամ փաստաթղթային ապացույց, որը ցույց կտար նրա կապը հայկական զինված ուժերի հետ: Պաշտպանությունը հրաժարվել է հարցաքննել այդ վկաներին՝ նշելով, որ նախապես չի տեղեկացվել նրանց կենսագրական տվյալների կամ ակնկալվող ցուցմունքների բովանդակության մասին:

Թեև ՔԴՕ-ն պաշտպանության կողմին իրավունք է տալիս դատաքննության փուլում ներկայացնել միջնորդություններ, Ռուբեն Վարդանյանի դատավարությունում այս դատավարական երաշխիքը պարբերաբար անտեսվել է: Հաղորդվել է, որ պաշտպանության կողմից ներկայացված միջնորդությունները հաճախ մերժվել են առանց գրավոր կամ բանավոր պատճառաբանության, ինչի հետևանքով որոշումների կայացման գործընթացը դարձել է անթափանց: Խնդիրը խորանում է այն պնդմամբ, որ որոշ միջնորդություններ ընդհանրապես չեն արձանագրվել դատական նիստերի արձանագրություններում: Արդյունքում, միջնորդություններ և առարկություններ ներկայացնելու դատավարական իրավունքի նման ընդհանուր անտեսումն էականորեն խաթարել է ամբաստանյալի՝ իր գործը արդյունավետ պաշտպանելու կարողությունը:

Այս բաժնում արձանագրված դատավարական խախտումների կուտակային ազդեցությունը, ներառյալ գործի նյութերն ուսումնասիրելու համար բավարար ժամանակ չտրամադրելը, փաստաթղթային և տեսաապացույցների հասանելիության սահմանափակումը, պաշտպանության միջնորդությունների

համակարգված մերժումն առանց պատճառաբանության, ինչպես նաև այդ միջնորդությունների բացակայությունը դատական արձանագրություններից, խախտում է ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածով և ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ անկախ և անաչառ դատարանի իրավունքը:

Թարգմանության և թարգմանչի իրավունք

Վարդանյանի փաստաբանի ցուցմունքները վկայում են, որ Ռուբեն Վարդանյանի դատավարությունում թարգմանության և թարգմանչի իրավունքներն արդյունավետ կերպով չեն երաշխավորվել: Թարգմանիչներ հազվադեպ են տրամադրվել, իսկ տրամադրվելու դեպքում նրանց աջակցությունը սահմանափակվել է միայն դատաքննության փուլով՝ մեղադրյալին թողնելով առանց լեզվական աջակցության ավելի վաղ դատավարական փուլերում²⁹¹: Նմանապես, գործի նյութերի թարգմանությունները տրամադրվել են ուշացումով և ոչ ամբողջական, ինչը սահմանափակել է մեղադրյալի՝ մեղադրանքները հասկանալու և իր պաշտպանությանը բովանդակային կերպով մասնակցելու կարողությունը: Նույնիսկ տրամադրված թարգմանություններում արձանագրվել են անճշտություններ: Վարդանյանի գործով նախնական լսման որոշման թարգմանությունը, ըստ հաղորդումների, պարունակել է գործի փաստերի հետ որևէ կապ չունեցող հղումներ բելառուսական օրենսդրությանը: Հետագայում ներկայացված ուղղված թարգմանությունն անդրադարձել է պաշտպանության կողմից ներկայացված միջնորդություններից միայն մեկին՝ ամբողջությամբ բաց թողնելով մյուսները:

Պաշտպանությունը նաև հայտնել է, որ մեղադրական եզրակացության ռուսերեն թարգմանությունը երբևէ չի հաստատվել լիազորված պաշտոնատար անձի կողմից, ինչը ներպետական իրավունքի ներքո դատավարական խախտում է և կասկածներ է առաջացնում թարգմանության ճշգրտության ու ամբողջականության, ինչպես նաև ամբաստանյալների՝ իրենց հասկանալի լեզվով իրենց դեմ ներկայացված մեղադրանքի բնույթի մասին տեղեկացվելու իրավունքի ապահովման վերաբերյալ: Արձանագրվել են անհամապատասխանություններ մեղադրական եզրակացության ադրբեջաներեն և ռուսերեն տարբերակների միջև՝ ներառյալ ենթադրյալ իրադարձությունների ամսաթվերի և նկարագրությունների տարբերությունները²⁹⁸: Ավելին, մի շարք նիստերում թարգմանիչները, ըստ հաղորդումների, բացակայել են կամ դատաքննության ընթացքում պաշտոնապես չեն ներկայացվել, ինչն էլ ավելի է խաթարել վարույթի ամբողջականությունը և ամբաստանյալների՝ արդյունավետ պաշտպանություն իրականացնելու կարողությունը:

Նույն դատարանում առանձին քննված Վազիֆ Խաչատրյանի գործը ցույց է տալիս անբավարար թարգմանության հնարավոր հետևանքները: Հայերեն խոսելով՝ Խաչատրյանը ցուցմունք է տվել. «Ես այնտեղ չեմ եղել, ներողություն եմ խնդրում բոլորից, ես այնտեղ չեմ եղել»: Դատարանի թարգմանիչն այս հայտարարությունը թարգմանել է որպես ադրբեջանցի ժողովրդից ներողություն՝ հայերի կատարած բոլոր միջադեպերի համար՝ մասնակցությունը հերքող խոսքը վերածելով խոստովանության: Այս միջադեպը ցույց է տալիս, որ տվյալ վարույթներում թարգմանչության անբավարարությունը պարզապես թերի թարգմանության հարց չէր, այլ տարածվել է ցուցմունքի բովանդակային խեղաթյուրման վրա՝ անմիջականորեն վնասելով պաշտպանությանը: Խաչատրյանը, որը 2023 թվականի հուլիսի 29-ին Լաչինի միջանցքով ԿԻՄԿ-ի միջնորդությամբ իրականացվող բժշկական տարահանման ժամանակ կալանավորվել էր, հետագայում դատապարտվել է 15 տարվա ազատազրկման: Նա 2026 թվականի հունվարին ազատ արձակված չորս կալանավորված անձանցից մեկն էր:

Հանրային հասանելիության բացակայություն

Բաքվի զինվորական դատարանը դատական նիստերին մերժել է բոլոր այն անձանց մուտքը, որոնք բացահայտորեն լիազորված չեն եղել Գլխավոր դատախազության կամ Գերագույն դատարանի կողմից՝ սահմանափակելով վարույթների հանրային վերահսկողությունը և խախտելով ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով և ԲԲԻՄԴ-ի 14-րդ հոդվածով երաշխավորված հրապարակային լսման իրավունքը:

Բաքվում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչները, որոնք խնդրել էին ներկա գտնվելու թույլտվություն, մերժում են ստացել՝ չնայած դիմումներ ներկայացրած լինելուն: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը բազմիցս, այդ թվում՝ վերջինը 2024 թվականին, կոչ է արել Ադրբեջանի իշխանություններին ապահովել, որ դատավարություններն անցկացվեն հրապարակային և ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի ու ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի պահանջներին համապատասխան: Այդ նախադեպային իրավունքում ընդգծվել է հրապարակային վարույթների կարևորությունը՝ որպես կամայական արդարադատությունից պաշտպանող երաշխիք և դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության ապահովման միջոց:

2025 թվականի հունվարից մինչև 2026 թվականի փետրվարին դատավարության ավարտը միայն Վարդանյանի գործով անցկացվել է ավելի քան 36 դատական նիստ³⁰⁴: Այդ ամբողջ ընթացքում վարույթների անկախ դիտարկում տեղի չի ունեցել և չի թույլատրվել³⁰⁵: Մուտք դատական դահլիճ թույլատրվել է միայն պետական AZERTAC լրատվական գործակալությանը³⁰⁶: Վարույթների

փաստացի փակ լինելը բացառել է մեղադրող կողմի ներկայացրած ապացույցների, նախագահող դատավորների վարքագծի, թարգմանչության համարժեքության և նիստերի ընթացքում ամբաստանյալների նկատմամբ վերաբերմունքի անկախ ստուգման հնարավորությունը:

Մեղադրական դատավճիռներ և նշանակված պատիժներ

2026 թվականի փետրվարի 5-ին Բաքվի զինվորական դատարանը մեղավոր ճանաչեց միավորված գործի բոլոր 15 համաամբաստանյալներին: Ամբաստանյալներին առաջադրվել էր 2,548 մեղադրանք՝ միավորված 1,389 քրեական գործերում՝ Ադրբեջանի Քրեական օրենսգրքի 20 հոդվածներով՝ ներառյալ ագրեսիվ պատերազմ պլանավորելու և վարելու, ցեղասպանության, պատերազմի օրենքների և սովորույթների խախտման, ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման և իշխանության բռնի զավթման մեղադրանքները: Ոչ մի ամբաստանյալ չի ընդունել իր մեղավորությունը բոլոր մեղադրանքներով:

Հինգ ամբաստանյալ դատապարտվել է ցմահ ազատազրկման՝ նախկին նախագահ Արայիկ Հարությունյանը, Ազգային ժողովի նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանը, Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լևոն Մնացականյանը և գեներալ-մայոր Դավիթ Մանուկյանը: Նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը և Բակո Սահակյանը դատապարտվել են 20 տարվա ազատազրկման. Ադրբեջանի օրենսդրությամբ 65 տարեկանից բարձր անձանց նկատմամբ ցմահ ազատազրկում չի կարող նշանակվել: Մնացած ութ ամբաստանյալները դատապարտվել են 15-19 տարվա ազատազրկման. Մադաթ Բաբայան և Մելիքսեթ Պաշայան՝ 19 տարի, Գարիկ Մարտիրոսյան՝ 18 տարի, Դավիթ Ալլահվերդյան և Լևոն Բալայան՝ 16 տարի, Վասիլի Բեգլարյան, Գուրգեն Ստեփանյան և Էրիկ Ղազարյան՝ 15 տարի:

2026 թվականի փետրվարի 17-ին Բաքվի զինվորական դատարանը Վարդանյանին մեղավոր ճանաչեց 42 մեղադրանքով՝ ներառյալ խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ահաբեկչությունը, ահաբեկչության ֆինանսավորումը և հանցավոր կազմակերպություն ստեղծելը, նրան դատապարտեց 20 տարվա ազատազրկման: Դատարանը սահմանեց, որ առաջին 10 տարին պատիժը պետք է կրի բանտում, մնացած մասը՝ խիստ ռեժիմի ուղղիչ հիմնարկում: Մեղադրող կողմը պահանջել է ցմահ ազատազրկում: 2026 թվականի փետրվարի 10-ի իր եզրափակիչ խոսքում Վարդանյանը հայտարարել է. «Ես հրաժարվում եմ մասնակցել արդարադատության նմանակմանը»: Նա վարույթը բնութագրել է

որպես «ցուցադրական դատավարություն»՝ առանց «արդար դատական գործընթացի իրական հնարավորության», և հետագայում հրաժարվել է բողոքարկել՝ ընտանիքի միջոցով հայտարարելով, որ վճիռը չի ճանաչում որպես արդարադատության իրավական ակտ:

Amnesty International-ը դատապարտել է մեղադրական դատավճիռները՝ դրանք բնութագրելով որպես «ոչ այլ ինչ, քան արդարադատության ծաղր», և նշել է, որ Վարդանյանի ու այլ քաղաքացիական անձանց՝ զինվորական դատարանում դատելը «ինքնին լուրջ մտահոգություններ է առաջացնում և անհամատեղելի է արդար դատաքննության երաշխիքների հետ»: Amnesty International-ը նշել է նաև, որ պաշտոնապես տեղեկություններ է պահանջել Ադրբեջանի իշխանություններից դատավարության և ապացույցների վերաբերյալ, սակայն պատասխան չի ստացել: 2026 թվականի մարտի դրությամբ՝ դատապարտված անձանցից ոչ մեկը չէր ստացել դատավճիռների պաշտոնական օրինակները ռուսերեն, հայերեն կամ ադրբեջաներեն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: